ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե-7177

«24» օգոստոսի 2026թ.

«ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ, Կոտայք, Առինջ, Վ. Նիկողոսյան 14)

Հարգելի՛ տիկին Սարգսյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար դատավորների պատմուճանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել են ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում՝ Հավելված N 1-ում և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ում հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև՝ ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի օգոստոսի 25-ը ներառյալ eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Հարգանքով,

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Մ.Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788